ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Մշակութային արժեքների պահպանության և վերականգնման ուսումնասիրությունների միջազգային կենտրոնի (ICCROM) գլխավոր ասամբլեայի 30-րդ նստաշրջանին Գ. Մոմջյանի մասնակցության մասին

Ս. թ. նոյեմբերի 29-ից դեկտեմբերի 1-ը Հռոմում մասնակցեցի Մշակութային արժեքների պահպանության և վերականգնման ուսումնասիրությունների միջազգային կենտրոնի (ICCROM) գլխավոր ասամբլեայի 30-րդ նստաշրջանին:

Նստաշրջանի ընթացքում մասնակցեցի նաև կազմակերպության գլխավոր տնօրենի, խորհրդի 13 անդամների ընտրություններին, կազմակերպության 2018-2019 թթ. գործունեության ծրագրի հաստատմանը և «Հետկոնֆլիկտային վերակառուցում. վերականգնում և համայնքային ներգրավվածություն» խորագրով թեմատիկ քննարկմանը:

Նստաշրջանին մասնակցում էին կազմակերպության 135 անդամ պետությունների ներկայացուցիչներ՝ մշակույթի, մշակույթի և զբոսաշրջության, արտաքին գործերի նախարարություններից, Հռոմում հավատարմագրված դիվանագիտական ներկայացուցչություններից, ՅՈՒՆԵՍԿՕ-ից, ԻԿՕՄՕՍ-ից, Համաշխարհային բանկից, ՄԱԿ-ի համաշխարհային պարենի և գյուղատնտեսության կազմակերպության (FAO) գրասենյակից:

Օրակարգի համաձայն նախ տեղի ունեցավ կազմակերպության անդամ-պետությունների ներկայացուցիչների հաստատումը, ապա խորհրդի 13 անդամների ընտրությունները:

Նստաշրջանի գլխավոր նախագահ ընտրվեց Նորվեգիայի ներկայացուցիչը, երեք փոխնախագաներ ընտրվեցին՝ Լիբանանից Սարգիս Էլ Խուրին, Շվեցարիայից՝ Օլիվեր Մարտինը, Սվազիլենդից՝ Թեմբելանի Նհալաբատսը: Խորհրդի անդամներ ընտրվեցին Բելգիայից Հիլդե դե Քլերկը, Լիբանանից Սարգիս Էլ Խուրին, Սվազիլենդից Թեմբելանի Նհալաբատսը, Սուդանից Ագլալ Մ Էլզուբահիր էլ Մալիկը, Շվեցարիայից Օլիվեր Մարտինը, Պորտուգալիայից Իզաբել Ռապոսո Դե

Մագալիանեասը, Գերմանիայից Բրիջիտտա Ռինգբեկը, ԱՄՆ-ից Ջոն Ռոբինսը, Ռուսաստանի Դաշնությունից Նինա Շանգինան, Դոմինիկյան Հանրապետությունից Ջուլիա Անտոնիա Վիջիոսո Վառելասը, Եգիպտոսից Ջիհանե Զաքին և Չինաստանից Եյ Զզուն: Անդամ պետությունները կազմակերպությունում դիտորդի կարգավիճակ շնորհեցին Վատիկանին, Հունգարիային և Պաղեստինին: Նստաշրջանի ընթացքում կազմակերպությանը անդամակցեցին Ուկրաինան և Հունգարիան:

Մշակութային արժեքների պահպանության և վերականգնման ուսումնասիրությունների միջազգային կենտրոնի գործող գլխավոր տնօրեն Ստեֆանո դե Կարոյի կողմից նստաշրջանի մասնակիցներին ներկայացվեց 2015-2017 թթ. կատարված աշխատանքը, որը բացի զուտ տեխնիկական մասից պարունակում էր նաև իրականացված վերապատրաստումների, Մերձավոր Արևելքում և Աֆրիկայում կազմակերպության կողմից իրականացված մասնագիտական աշխատանքը մշակութային ժառանգության պահպանության և վերականգնման գործում՝ մասնավորապես ռազմական գործողություններից կամ բնական աղետներից հետո մշակութային ժառանգության հաշվառում, վնասի գնահատում, հետագա գործողությունների մշակում:

Գլխավոր տնօրենի կողմից ներկայացվեց կազմակեպության կողմից Շարժայում բացված մասնաճյուղի և նրա գործունեության մասին տեղեկատվություն, ներկայացվեցին նաև առկա մարտահրավերները, որոնց առջև կանգնած է քաղաքակիրթ հանրությունը:

Մշակութային արժեքների պահպանության և վերականգնման ուսումնասիրությունների միջազգային կենտրոնի գործող գլխավոր տնօրեն Ստեֆանո դե Կարոյի կողմից նստաշրջանի մասնակիցներին 2015-2017 թթ. կատարված աշխատանքը ներկայացվելուց և այն մասնակիցների կողմից ի գիտություն ընդունվելուց հետո, կազմակերպության կանոնադրության համաձայն տեղի ունեցավ նոր գլխավոր տնօրենի ընտրություն:

77 կողմ ձայնով Մշակութային արժեքների պահպանության և վերականգնման ուսումնասիրությունների միջազգային կենտրոնի նոր գլխավոր տնօրեն ընտրվեց Հարավ Աֆրիկյան Հանրապետությունից Վեբեր Նդորոն՝ 4 տարի ժամկետով:

Նոր գլխավոր տնօրենի կողմից ներկայացվեց 2018-2019 թթ. իր գործունեության ծրագիրը, ինչպես նաև ընդունվելիք 2018-2023 թթ. ռազմավարությունը:

Նստաշրջանի ընթացքում իսպանախոս երկրների կողմից առաջարկվել է, որպեսզի Մշակութային արժեքների պահպանության և վերականգնման ուսումնասիրությունների միջազգային կենտրոնի կայքը և բոլոր նյութերը հասանելի լինեն իսպաներեն լեզվով ևս:

Նոյեմբերի 30-ին և դեկտեմբերի 1-ին տեղի անցկացվեց «Հետկոնֆլիկտային վերակառուցում. վերականգնում և համայնքային ներգրավվածություն» խորագրով թեմատիկ քննարկումը: Քննարկման ժամանակ հանդես եկան Իտալիայի ոստիկանության՝ մշակութային ժառանգության պահպանության ստորաբաժանման ներկայացուցիչը, ով ներկայացրեց իրենց ստորաբաժանման կողմից Լիբիայում իրականացված աշխատանքի և փորձի մասին:

Համաշխարհային բանկի ներկայացուցիչ Մահմուդ Մուհեդինի կողմից ներկայացվեց բանկի կողմից հետկոնֆլիկտային վերակառուցման և վերականգնման համար տրամադրված վարկերը, իրականացված աշխատանքը՝ շեշտադրելով պատմական քաղաքների վերականգնումը՝ դրանք հետագայում զբոսաշրջության նպատակով օգտագործելու և սոցիալ-տնտեսական կյանքը ապահովելու համար:

Քննարկման ընթացքում Բալկանյան պատերազմում ավերված և ապա մասնակի վերականգնված մշակութային ժառանգության մասին խոսեց Բոսնիա և Հերցոգովինայի ներկայացուցիչ Ամրա Հադզիմուհամեդովիցը, ով նշեց, որ Դեյտոնյան համաձայնագրում ամրագրվել է կետ մշակութային ժառանգության վերականգնման և հետագա պահպանության մասին:

Լիբանանի և Սիրիայի ներկայացուցիչների կողմից ներկայացվեց մշակութային ժառանգության պահպանության և հետկոնֆլիկտային վերակառուցման խնդիրը Մերձավոր Արևլքում:

Սույն համատեքստում մեր կողմից նշվեց, որ Մերձավոր Արևելքի էթնիկ բազմազանության և հանդուրժողականության վերջին բեկորների պահպանությունը կարևոր դեր ունի տարածաշրջանային անվտանգության վերականգնման համար: Տարածա-շրջանում տեղի ունեցող հակամարտությունների արդյունքում ուղղակի

կամ անուղղակի ավերվում է հայկական պատմամշակութային ժառանգությունը: Հայաստանի հարևանները տարբեր վերաբերմունք են ցուցաբերում հայկական պատմական ժառանգության պահպանման հարցում: Հաշվի առնելով վերը ասվածը՝ չափազանց կարևոր է «Հետկոնֆլիկտային վերակառուցում. վերականգնում և համայնքային ներգրավվածություն» խորագրով թեմատիկ քննարկման ընթացքում մեկ անգամ ևս հիշեցնել հայկական պատմամշակութային ժառանգության պահպանության կարևորության մասին: Որպես աշխարհի հարյուրավոր երկրներում համայնքներ և մշակութային ժառանգություն ունեցող ժողովուրդ, կարևորում ենք մշակութային ժառանգության պահպանությունը՝ անկախ նրա պատկանելիությունից: Հայաստանը, որպես միջազգային համայնքի ներկայացուցիչ, իր Սահմանադրությամբ ամրագրել է, որ պատմության և մշակույթի հուշարձանները, մշակութային այլ արժեքները գտնվում են պետության հոգածության և պաշտպանության ներքո, ինչպես նաև ներքին օրենսդրությամբ ևս արգելվում է հուշարձանների օգտագործումը քաղաքական, գաղափարախոսական, կրոնական, ռասայական ու ազգային խտրականության նպատակներով:

ՀՀ-ում հաշվառված է մոտ 70 մահմեդական մշակույթին պատկանող հուշարձան, որոնք պահպանվում ու վերականգնվում են: Մասնավորապես իսլամական հուշարձաններից մեկը 15-րդ դարում կառուցված, թուրքմեն ամիրա Փիր Հուսեյնի հոր՝ Ամիր Սաադի դամբարանը և Երևան քաղաքում գտնվող Կապույտ մզկիթը, որը կառուցել է Երևանի կիսանկախ սարդար Հուսեյն-Ալի խանը 1766 թվականին: Հիշեցվեց 1991թ. և 1994 թ. ԵԱՀԿ Բուդապեշտի գագաթաժողովին հաստատված Կրակովյան փաստաթուղթը /ԵԱՀԿ անդամ-պետությունների կողմից մշակութային ժառանգության պահպանության մասին/ որ սահմանում է, որ «մասնակից երկրները պետք է պատշաճ ուշադրություն դարձնեն այն կրոնական հուշարձաններին, որոնք ստեղծած համայնքներն այլևս դրանք չեն օգտագործում կամ այլևս գոյություն չունեն տվյալ տարածքում»: Հիշատակվել է նաև ԻԿՕՄՕՍ-ի/Հուշարձանների և տեսարժան վայրերի միջազ-գային խորհուրդի 16-րդ նստաշրջանում ընդունված բանաձևի մասին, որը դատա-պարտում էր 2005 թվականին Ադրբեջանի կողմից Ջուղայի հայկական գերեզ-մանոցի հազարավոր խաչքարերի ոչնչացումը և դրա տեղում ռազմական հենակետի կառուցումը, ինչը իր հերթին «Զինված ընդհարման դեպքում

մշակութային արժեքների պաշտպանության մասին» Հաագայի 1954 թ. մայիսի 14-ի կոնվենցիայի և «Զինված ընդհարման դեպքում մշակութային արժեքների պաշտպանության մասին» Հաագայի 1954 թ. կոնվենցիային կից 1999 թ. մարտի 26-ի երկրորդ արձանագրության կոպիտ խախտում է:

Ներկայացվել է նաև, որ սիրիական Դեր Զորի հայկական Սրբոց Նահատակաց եկեղեցին՝ հայկական անշարժ ժառանգության գանձերից մեկը, որը տարիներ առաջ իսլամիստները ոչնչացրեցին, իսկ 2017 թվականի սեպտեմբերին թուրքական ուժերը հակաահաբեկ-չական գործողության պատրվակով ավերեցին 2012 թվականին վերականգնված Դիարբեքիրի Սուրբ Կիրակոս եկեղեցին:

Քննարկմանը ներկայացվել է Լիբանանի, Եմենի, Ճապոնիայի, Մեքսիկայի, Շրի-Լանկայի փորձը հետկոնֆլիկտային վերակառուցման գործում, որտեղ կարևորվել է համայնքների ներգրավումը և կրթադաստիարակչական տարրը:

Ադրբեջանական կողմը, որը ներկայացել էր մի քանի մասնակիցներով, մեկ անգամ փորձեց շահարկվել մշակութային հուշարձաններին առնչվող հարցեր, ինչը մեր և նախագահողի կողմից կանխվեց:

Նստաշրջանի փակումից առաջ տեղի ունեցավ նաև Մշակութային արժեքների պահպանության և վերականգնման ուսումնասիրությունների միջազգային կենտրոնի պարգևատրման արարողությունը՝ նվիրված հուշարձանների պահպանության և վերակառուցման գործում նշանակալի ավանդ ունեցած գիտնականին: 2017 թվականին այդ պարգևին արժանացավ իտալացի ճարտարապետ Ջովանի Կարբոնարան:

ՀՀ մշակույթի նախարարության
աշխատակազմի մշակութային ժառանգության և ժողովրդական արհեստների
վարչության գլխավոր մասնագետ
Գառնիկ Մոմջյան